Վարդան Այվազյան. ««Գլոբալ Գոլդ Մայնինգն» ընտրել է շանտաժի ուղին»

1. «Հետք» կայքը, միտումնավոր կամ թյուրիմացաբար, չի հայտնել սակայն, / իսկ այս տեղեկատվությունը նույնությամբ վերահրապարակել են այլ լրատվամիջոցներ / որ ԱՄՆ Նյու Յորքի հարավային շրջանի դատավոր Զեյ Փոլ Օտկենը ԳԳՄ-ի օգտին որոշումը կայացրել է չորս տարի առաջ՝ 2008 թվականի հունիսի 25-ին: Այս որոշումը վերջնական ուժի մեջ է մտել առանց բողոքարկման, քանի որ Վարդան Այվազյանը այս որոշումը բողոքարկելու որեւէ հնարավորություն չի ունեցել այն պարզ պատճառով, որ ոչ պաշտոնապես, ոչ էլ որեւէ այլ կերպ ուղղակի իրազեկված չի եղել: Հետեւաբար եւ բնականաբար՝ չէր էլ կարող իմանալ, որ նման դատավարություն է կայացել ու այդպիսի որոշում է կայացվել:

   Տեղեկացման կարգով՝ հավելեմ, որ ըստ ինձ հայտնի ընթացակարգի, ԱՄՆ դատական այս ատյանը հայցվոր կողմի ներկայացրած տվյալները հավաստի է համարում եւ դրանց վրա հիմնվող որոշումներ է կայացնում, եթե այդ տվյալները ոչ ոք չի հերքում: Այս առումով հիմնավոր կասկածներ ունեմ, որ դատավարության մասին տեղեկացված չեմ եղել միտումնավորությամբ, որպեսզի ԳԳՄ-ի ներկայացրած տվյալները հերքող չլինի:

Ըստ «Հետքի» վեռհիշյալ հրապարակման, ԳԳՄ-ն Նյու Յորքի հարավային շրջանի դատարանին նյութեր է տրամադրել՝ նշելով, թե 2006 թվականին «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ընկերության դուստր ընկերությանը, որը Հանքավանի հանքավայրի լիցենզառուն էր, բնապահպանության նախկին նախարար Վարդան Այվազյանը իբր կոռումպացված եւ ոչ պատշաճ պահանջներ է ներկայացրել: Եւ որ, իբր, ընկերությունը այդ իրավիճակի մասին տեղեկացրել է Հայաստանի եւ ԱՄՆ համապատասխան մարմիններին, իսկ արդյունքում ընկերությունը Այվազյանի պատճառով կորցրել է Հանքավանի հանքավայրի նկատմամբ հսկողությունը□

2. Առայսօր ոչ լրատվամիջոցներով, ոչ էլ դատարանում ոչ մի անձ չի հայտարարել, թե ես իրեն կամ ինքն ինձ կաշառք է առաջարկել: Այս մասին գրել են միայն լրատվամիջոցները՝ առանց որեւէ մի անձի հղում կատարելու: Եթե գեթ մեկ անձ հայտարարի, որ ես իրենից որեւէ առիթով կամ պատճառով կաշառք եմ պահանջել, ես անմիջապես այդ սուտը հերքելու համար պատրաստ եմ դատարան դիմել: Նման հայտարարություն արած մարդ առայսօր չկա: Եւ եթե ԳԳՄ-ն ոչ մի բան չի թաքցնում, շանտաժի փորձ չի անում, այլ ամեն ինչ ցանկանում է բացահայտել, ուրեմն թող հրապարակի նաեւ այն ձայնագրությունը կամ տեսագրությունը, որի գոյության մասին անվերջ խոսում է եւ որում ես

իբր կաշառք եմ պահանջում: Ինչո՞ւ չեն օգտագործում ինձ դատապարտելու այդ հնարավորությունը:

3. Իմ, որպես բնապահպանության նախարար, հրամանով հանձնարարական է տրվել՝ ՍՀԱ ՍՊԸ-ի կողմից հետազոտվող Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրում ստուգում իրականացնելու համար:

Հաստատված է ՀՀ բնապահպանության նախարարի
« 02 » մայիսի 2002թ. թիվ 59 հրամանով

Ձև 1

ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանական պետական տեսչություն

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ 100116

բնապահպանական պետական տեսուչի կողմից
ստուգում անցկացնելու մասին

Հանձնարարվում է՝ **ՀՀ բն. նախ.աշխատակազմի ԲՊՏ-ի ԸԵՄՎ բաժնի պետ. տեսուչներ Դ. Դավթյանին և Գ. Խոջայանին**

(ստուգողի պաշտոնը, անունը, ազգանունը)

կատարել երկրաբանական վերահսկողություն համաձայն «ՀՀ –ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, ընդերքօգտագործման կարգի և բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ

(ստուգման նպատակը, հիմք (եր)ը)

«ՄՀԱ»ՍՊԸ-ի կողմից հետախուզվող Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրում

(կազմակերպության անվանումը, հասցեն, հաշվառման համարը (ՀՎՀՀ))

2005թ-ի 2-րդ եռամսյակի ղրությամբ

(ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը)

Ստուգման իրավական հիմք(եր)ը՝ ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենք

(Հայաստանի Հանրապետության բնապահպանական տեսչության պետի հրամանի համարը, ամիս, ամսաթիվը)

Ստուգումը սկսել «27» 04 2005թ. և ավարտել «30 » 04 2005թ.

Հանձնարարագրի մասին ծանուցվել է կազմակերպությանը
« 26 » IV 2005 թ.

(կազմակերպության ղեկավարի ստորագրությունը)

Կ.Տ.

ԲՊ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Ա.ԱՎԱԳՅԱՆ

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

Հաստատված է ՀՀ բնապահպանության նախարարի
« 02 » մայիսի 2002թ. թիվ 59 հրամանով

Ձև 2

ԱԿՏ թիվ 100026

Կազմակերպության կողմից ՀՀ բնապահպանական օրենսդրության
խախտման փաստի հայտնաբերման մասին

_____ _____ տարած
(մարզի անվանումը) (անվանումը)

քային բնապահպանական տեսչություն

« » _____ 200 թ.

ՍԻԿ ՍՄԸ կողմից Մերսեդես Հանֆուսանի
(կազմակերպության անվանումը)
ոռոգման-ցամաքեցնող համակարգում - ում
(ակտը կազմող անձի պաշտոնը, անունը, ազգանունը)
ՀՀ ԲՊՏ ընդերքի երկրաբանական ցամաքեցման
վերահսկողության բաժնի պետ. տեսուչ Գ. Հովսեփյանի կողմից կատարված
տուգման արդյունքում պարզվեց, որ ՍԻԿ ՍՄԸ-ի տնօրեն
(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)
Յու. Լալայանի կողմից թույլ է տրվել բնապահպանական
օրենսդրության խախտում
(օրենսդրության անվանումը կամ իրավական նորմը)
այն է՝ ՍԻԿ ՍՄԸ-ի կողմից կոյուղի ցանցում հանքախառնի
կղզիչ-ցամաքեցնող համակարգում խախտումներ են հան-
քախառնի վերադարձման ոչխարանում:
Խախտվել է ՀՀ կողմից գրված հանքախառնի վերադար-
ձման 01.04.2004թ թիվ 308 թույլտվության կետ 11-ի
"գ" ենթակետը՝ խախտվել է հանքաջրերի համարյա
(խախտման ժամանակաշրջանը)
ամենանակարդը: Խախտվել է ընդերքի ցամաքեցման օրենքի 22 հոդվածի
կետ 3-ի 3 ենթակետը:

Բնապահպանական օրենսդրության խախտման համար պատասխանատու է

1. ՍԻԿ ՍՄԸ-ի տնօրեն Յու. Լալայանը
(կազմակերպության պատասխանատու ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը)

2. _____

Խախտում թույլ տված անձի բացատրությունը _____

2.1 Ակտը կազմված է երկու (2) օրինակից, որից մեկ (1) օրինակը
(տառերով և թվով) (տառերով և թվով)

հանձնվել է կազմակերպության պատասխանատու ղեկավարին:

2.2 Ակտին կցվում է _____
բնապահպանական օրենսդրության խախտման համար կիրառվող պատժամիջոցների

_____
վերաբերյալ փաստաթղթերի, ձևերի անվանումները

Ստուգման մասնակից անձինք՝

Ստուգողների կողմից՝
պաշտոնը, ազգանունը — ստորագրությունը

(ակտը կազմողի)

(մասնակիցների) — (մասնակիցների)

Ստուգվողների կողմից՝
պաշտոնը, ազգանունը — ստորագրությունը

1. Կիսկ ՍՊԸ տնօրեն Յու Խաչատրյան
2. _____
3. _____

Ծանուցում

1. Ստացա ակտի (1) էջ (թվերով և տառերով) օրինակը,, որի վերաբերյալ.

առարկություն չունեմ

(պաշտոնը, ազգանունը) — (ստորագրությունը)

2. Ունեմ առարկություններ, որի համար կից ներկայացնում եմ բացատրությունը.

(պաշտոնը, ազգանունը) — (ստորագրությունը)

Ա Կ Տ

ՍՀԱ ՍՊԸ–ի կողմից Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերականգնման և վերանմուշարկման աշխատանքների երկրաբանական վերահսկողության

28 ապրիլի 2005թ. **գ. Հանքավան**

Մենք՝ ներքոստորագրյալներս, «ՍՀԱ» ՍՊԸ-ի տնօրեն Յու. Լալազարյանը, և ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ԲՊՏ ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի պետ.տեսուչ-երկրաբաններ Դ. Դավթյանը և Գ. Խոջայանը կազմեցին սույն ակտը, Կոտայքի մարզի Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրում կատարված 2004թ. նախագծով նախատեսված N/N 13; 20 և 41 բովանցքների վերականգնման և վերանմուշարկման աշխատանքների նկատմամբ:

Ստուգման ընթացքում պարզվել է.

1. Մինչև 2004թ. դեկտեմբեր ամիսը հանքավայրում նախագծով նախատեսված աշխատանքները դեռ սկսված չեն եղել:
2. 2004թ. դեկտեմբերին նախագծի գործելու ժամկետը երկարացվել է մինչև 2005թ. վերջը:
3. Նախատեսված վերականգնողական աշխատանքներից կատարվել է N/N 13; 41 բովանցքների բերանների բացումը և N 20 բովանցքով վերականգնված է 122 գծ մ, որը հասել է բուն հանքային մարմնին և ներկայիս դրությամբ աշխատանքները դադարեցված են բարդ լեռնատեխնիկական պայմանների պատճառով, որոնց շարունակությունը կարող է բերել մարդկային զոհերի:
4. Նմուշարկման նախատեսված ծավալներից չի վերցված ոչ մի նմուշ:
5. Վերականգնողական աշխատանքները կատարված են ձեռքով առանց որևէ տեխնիկայի օգտագործման, որը կասկածի տակ է դնում աշխատանքների ժամանակին ավարտելու հարցը:
6. Հանքավայրի գնահատման նախագիծը կազմելիս, հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ բովանցքները անցած են եղել 2,5 մ^2 կտրվածքով, լեռնային փորվածքները անցած են եղել 50-60 տարի առաջ և փորվածքները կարող էին լրիվ փլված լինել:

Յու. Լալազարյան
Դ. Դավթյան
Գ. Խոջայան

Արձանագրություն

ՀՀ Գոգարքի մարզ.
գ. Լուսաձոր

6.07.2007թ.

Մեծաթիվ հեղինակությունների՝ ՀՀ Գոգարքի փոքրաչափ բանկի (FPS) տնօրենի պաշտոնակատար Գ. Մարգարյանի, գլխավոր հաշվապահ Ա. Մուրադյանի, ՀՀ ԲՀ. FPS ՀԵՕՄ բանկի ավագ պետական գրասենյակի գլխավոր-երկրորդական Գ. Խոզոյանի, պետական գրասենյակի գլխավոր-երկրորդական Գ. Մարտունյանի, Բ.Ե. ԵՄՕՀ բանկի պետական գրասենյակի Գ. Պորտեսի, «ՀԵՖ» ՊՈԱԿ-ի կառավարչի ֆինանսական բանկի պետ Գ. Հովսեփյանի, «Գոգարքի Գյուղ Խմբագիր» ՍՊԸ կոմանդիտային ընկերության Գ. Սամսոնյանի հեղինակությամբ կազմվեցին սույն արձանագրությունը հետևյալ մասին.

Հանձնաժողովի պրոֆեսիոնալ հանձնաժողովում տեսնելով թերության ստեղծման հանգամանքները պարզեց, որ Հանձնաժողովը հանձնաժողովի փոքրաչափ «Գոգարքի Գյուղ Խմբագիր» ՍՊԸ երկրորդականությունների ուսումնասիրությունը չկա երաշխավորված:

Հանձնաժողովի անդամներ Գ. Մարգարյան.
Ա. Մուրադյան
Գ. Խոզոյան
Գ. Պորտես
Գ. Մարտունյան
Գ. Հովսեփյան

Հանձնարարագրի մասին ծանուցված լինելու փաստը ԳԳՄ գլխավոր տնօրեն Յու. Լալազարյանը հաստատել է 26. 04. 2005 թ.-ին դրված իր ստորագրությամբ: ԳԳՄ կողմից բնապահպանական օրենսդրության խախտման փաստ հայտնաբերելու մասին այդ ստուգման արդյունքում կազմված ակտը ԳԳՄ-ն վիճարկում է միայն ամսաթվի բացակայության պատճառով, մինչդեռ նույն խախտումների արձանագրությամբ 28. 04. 2005 թ. ՍՀԱ-ին հանձնված ակտը ԳԳՄ գլխավեր տնօրեն Յու. Լալազարյանը ոչ միայն ստորագրել, այլ նաեւ կնքել է: Իսկ ակտում արձանագրված է, որ. «Մինչեւ 2004 թ-ի դեկտեմբեր հանքավայրում նախագծով նախատեսված աշխատանքները դեռ սկսված չեն եղել»:

Ապա նախագծի գործելու ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2005-ի տարեվերջ: Ակտում նշված է նաեւ, որ. «նմուշարկման նախատեսված ծավալներից չի վերցված ոչ մի նմուշ: Վերականգնողական աշխատանքները կատարված են ձեռքով՝ առանց որեւէ տեխնիկայի օգտագործման, ինչը կասկածի տակ է դնում աշխատանքները ժամանակին ավարտելու հարցը: Հանքավայրի գնահատման նախագիծը կազմելիս հաշվի չի առնվել, որ լեռնային փորվածքները անցած են եղել 50-60 տարի առաջ եւ կարող էին լրիվ փլված լինել»:

Կա նաեւ հանձնաժողովի 6 անդամների ստորագրությամբ արձանագրություն՝ 06. 07. 2007 թ. թվագրությամբ, որ. «Հանքավանի հանքավայրի տարածքում ԳԳՄ ՍՊԸ-ն երկրաբանահետախուզական աշխատանքներ չի իրականացնում»: Այսինքն, հետագայում եւս, երբ ես այլեւս բնապահպանության նախարար չեմ եղել, Հանքավանում ԳԳՄ-ն աշխատանքներ չի իրականացրել:

Այս պարագաներում ԳԳՄ-ն հանիրավի հայտարարում է, թե Հանքավանի հանքավայրում երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու համար ներդրել է 2,5 միլիոն դոլար: Եթե նման ներդրումներ կատարած լինեին, ապա ԳԳՄ-ն նվազագույնը պետք է 120 միլիոն դրամի հարկային պարտավորություն կատարած լիներ, մինչդեռ ՀՀ հարկային պետական ծառայության պետ պարոն Ցոլակյանի տրամադրած տեղեկանքը հաստատում է, որ ԳԳՄ-ն 2006 թվականին վճարել է ընդամենը 10 միլիոն 350 հազար դրամ հարկ, որի հիմնական մասը պետական վճարներն են: Հետեւաբար, ԳԳՄ-ի այս ողջ խաբկանքի նպատակը իր ամերիկյան բաժնետերերին խաբելն է:

Պնդում եմ նաեւ, որ Հանքավանի լիցենզիան չի դադարեցվել: Հակառակ պնդումը՝ խաբեություն եւ շանտաժ է: Հանքավանի լիցենզիայի ժամկետն է ավարտվել՝ մեկ տարի երկարաձգելուց հետո եւ նոր լիցենզիա չի տրամադրվել: Նախարարության այս որոշումը ԳԳՄ-ն չի էլ փորձել բողոքարկել:

Առանձնակի ուշադրության է արժանի նաեւ Յու. Լալազարյանի պարագան: Լալազարյանը ԳԳՄ-ի բաժնետերերից է, որից ԳԳՄ-ն դատական կարգով 5 միլիոն դոլարի փոխհատուցում է պահանջել: Միաժամանակ նա ԳԳՄ-ի գլխավոր տնօրենն է: Հետո էլ ԳԳՄ-ն պնդում է, թե ես Լալազարյանին ուղղորդել եմ: Այս հանգամանքը բացահայտման ու բացատրության անհրաժեշտություն է առաջացնում: Այլապես ստավում է, որ ԳԳՄ-ի գլխավոր տնօրենը իր ստացած եկամուտները իբր ինձ է տվել, մինչդեռ ես խոչընդոտել եմ իբր ինձ համար աշխատող այդ ընկերության գործունեությունը, լիցենզի չեմ տրամադրել կամ զրկել եմ լիցենզիայից:

«Հետքի» հրապարակման մեջ նշված է նաեւ, որ 2006 թվականի նոյեմբերի 7-ին ԳԳՄ-ն 30-օրյա բանակցությունների փուլ է մտել՝ միջազգային արբիտրաժին դիմելու համար: ԳԳՄ-ն արբիտրաժային դատարանին հայց էր ներկայացրել՝ երեք հայտնի վաճառող/բաժնետերերի եւ իբր նախկինում ծպտյալ բաժնետեր ու մյուս բաժնետերերին ուղղորդող ՎարդանԱյվազյանի դեմ: ԳԳՄ-ն 2006 թվականի դեկտեմբերի 29-ին դիմել է Փարիզում տեղակայված արբիտրաժ, իսկ 2008 թվականի սեպտեմբերի 5-ին Միջազգային արբիտրաժային դատարանը որոշում է կայացրել՝ Վարդան Այվազյանին կողմ համարել՝ հիմնվելով Նյու Յորքի հարավային շրջանի դաշնային դատարանի 2008 թվականի հունիսի 25-ին կայացրած որոշման վրա: Այդուհետ ՄԱՊ-ի Տրիբունալը հայտնաբերել է թյուրիմացությունը եւ 2011 թվականի դեկտեմբերին որոշել է գործընթացը շարունակել միայն հայտնի երեք բաժնետերերի մասով: Միայն 2012 թվականի մարտին է ԳԳՄ-ն դարձյալ դիմել Նյու Յորքի հարավային շրջանի դաշնային դատարան՝ պահանջելով որոշում կայացնել Այվազյանի նկատմամբ՝ նույն դատարանի 4 տարի առաջ կայացրած որոշման հիման վրա եւ/կամ համապատասխանեցնել ՄԱՊ-ի Տրիբունալի նախադեպերին: Ընդ որում, ԳԳՄ-ն ծանուցել է ՄԱՊ-ին, որ երեք բաժնետերերի նկատմամբ ընթացող արբիտրաժը վիճարկելի է եւ պետք է դադարեցվի՝ հաշվի առնելով Այվազյանի հանդեպ կայացված որոշումը:

4. Սեպտեմբերի 19-ին «Հետքը» հրապարակել է ԳԳՄ-ի «պարզաբանումը», որը հետեւել է «Հայելի» ակումբում իմ ասուլիսին, «Արմնյուս» հեռուստաընկերության «Բանաձեւ» եւ «Կենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» հաղորդաշարերին հյուրընկալվելիս իմ ներկայացրած փաստարկներին ու

պարզաբանումներին: Պնդել եւ շարունակում եմ պնդել, ինչը պատրաստ եմ հաստատել նաեւ ցանկացած դատարանում, որ Նյու Յորքի Հարավային շրջանի դատարանի կայացրած որոշումը վերաբերում է իմ՝ որպես բնապահպանության նախարար իրականացրած, օրենքով սահմանված գործողություններին, քանի որ ես՝ որպես նախարար եմ դադարեցրել Հանքավանի հանքավայրի նկատմամբ ԳԳՄ ունեցած հանքային իրավունքները՝ լիցենզիայի ժամկետն ավարտվելուց հետո նոր լիցենզիա չտրամադրելու միջոցով եւ հիմք ընդունելով ԳԳՄ ընկերության կողմից իր ստանձնած պարտավորությունները չկատարելու մասին ակտը : Պնդում եմ, որ դատական գործընթացների վերաբերյալ չեմ ծանուցվել, քանի որ ինձ «ծանուցումներ» ուղարկել է ոչ թե Նյու Յորքի հարավային շրջանի դաշնային դատարանը, ինչպես կարգն է, այլ ԳԳՄ իրավաբանը:

ԳԳՄ-ն պնդում է, որ Նյու Յորքի հարավային շրջանի դաշնային դատարանի որոշումը կայացվել է 2003 թվականին ՍՀԱ ՍՊԸ բաժնեմասի գնման պայմանագրի դրույթների համաձայն: /ՍՀԱ-ն Հանքավանի հանքավայրի լիցենզառուն է եղել:/

5. Իրոք, մատնանշված պայմանագիրը, ըստ կողմերի պայմանավորվածության, սահմանել է, որ պայմանագրի նկատմամբ պետք է կիրառվի Նյու Յորքի օրենքը եւ պայմանագիրն ընդատյա է Նյու Յորքի Հարավային շրջանի դատարանին: Այս պայմանագրի կողմերն են, ըստ

the State of New York without regard to conflicts of laws principles.

11.16 **Counterparts, Language.** This Agreement may be executed in one or more counterparts, each of which will be deemed to be an original copy of this Agreement and all of which, when taken together, will be deemed to constitute one and the same agreement. This Agreement has been prepared in English. All documents, notices, waivers and all other communication written or otherwise between the parties hereto in connection with this Agreement shall be in English. This Agreement shall also be translated into and executed in Armenian. If there is any inconsistency betweeen the versions, English version shall prevail.

IN WITNESS WHEREOF, the parties have executed and delivered this Agreement as of the date first written above.

կոլիզիոն նորմերի կիրառման:

11.16 **Կրկնօրինակներ, Լեզուն:** Սույն Պայմանագիրը կարող է ստորագրվել մեկ կամ մի քանի կրկնօրինակներով, որոնցից յուրաքանչյուրը պետք է համարվի սույն Պայմանագրի բնօրինակ եւ որոնցից բոլորը, միասին վերցված, պետք է համարվեն մեկ եւ միեւնույն պայմանագիրը: Սույն Պայմանագիրը պատրաստվել է անգլերեն լեզվով: Սույն Պայմանգրի հետ կապված, կողմերի միջեւ գրավոր կամ այլ կերպ կատարվող բոլոր փաստաթղթերը, ծանուցումները, հրաժարումները եւ այլ հաղորդագրությունները պետք է լինեն անգլերեն: Սույն Պայմանագիրը պետք է նաեւ թարգմանվի եւ ստորագրվի հայերեն լեզվով: Տարբերակների միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ, կողմերը ստորագրում եւ տրամադրում են սույն Պայմանագիրը վերը նշված ամսաթվին:

Signed for and on behalf of the Sellers

Yuri Lalazaryan

Signed for and on behalf of the Buyers

Van Krikoriah
Vice President
Global Gold
Mining, LLC

Ստորագրված է Վաճառողների անունից եւ կողմից

Յուրի Լալազարյան

Ստորագրված է Գնորդի անունից եւ կողմից

Վան Գրիկորյան
Փոխնախագահ
Global Gold
Mining, LLC

Mayren Batoyan

Մայրեն Բաթոյան

Edward Janibekian

Էդվարդ Ջանիբեկյան

www.Veriface.com

փաստաթղթի, Յու. Լալազարյանը, Վան Գրիգորյանը, Մայրեն Բատոյանը եւ Էդվարդ Ջանիբեկյանը, բայց ոչ ես: Վարդան Այվազյանը այդ պայմանագիրը չի ստորագրել, այդ պայմանագրի հետ որեւէ

առնչություն ունենալ չէր կարող, ուստի եւ չի կարող համարվել այդ պայմանագրի կողմ:

Հետեւաբար, անհիմն են ԳԳՄ-ի պնդումները, թե Նյու Յորքի հարավային շրջանի դաշնային դատարանը Վարդան Այվազյանի նկատմամբ վճիռը կայացրել է ոչ որպես նախարարի, այլ Այվազյան անձի նկատմամբ: Բնականաբար, ԳԳՄ-ն գիտակցում է, որ որպես նախարար, իմ գործողությունների իրավաչափությունը կարող է վիճարկվել միայն Հայաստանի դատարանում: Իսկ Նյու Յորքի հարավային շրջանի դաշնային դատարանում իմ նկատմամբ վճիռ կայացնելու համար հարկ է եղել ինչ-որ կերպ նշել որպես անձ իմ որեւէ առնչությունը իրենց կատարած գործարքին: Հենց այս առնչությունը ապահովելու համար էլ հնարվել է, թե ես ՍՀԱ-ի բաժնետերերին ուղղորդող, նրանց որոշումները ղեկավարող ծպտյալ բաժնետեր եմ: Եւ քանի որ այս հնարանքը, իմ չտեղեկացվածության պարագայում, հերքող չի եղել, Նյու Յորքի հարավային շրջանի դաշնային դատարանը Այվազյանին ճանաչել է պրինցիպալ, ինչը բացահայտ թյուրիմացության հետեւանք է:

Իմ պնդումները հաստատում է նաեւ 2006 թվականի նոյեմբերի 15-ին բաժնետեր Էդվարդ Ջանիբեկյանի ԳԳՄ-ին եւ պարոն Սքոտ Հորթոնին ԳԳՄ-ի փաստաբան Հրայր Ղուկասյանի միջոցով փոխանցած նամակը,

15.11.2006թ

ք. Երևան

Գլոբալ Գոլդ Մայնինգ
պարոն Սքոտ Հորթոնին
(փաստաբան Հրայր
Ղուկասյանի միջոցով)

Հարգելի պարոն

Ստացա ինձ հասցեագրված Ձեր նամակը, որը թվագրված է 2 նոյեմբերի 2006թ. և որում դուք փորձում եք ինձ որպես ՍՀԱ ՍՊԸ-ի բաժնետեր ներկայացնել պահանջ այն մասին, որ իբր բաժնետերերի զնման պայմանագրով նախատեսված պայմանավորվածությունների մի մասը խախտվել է և պատճառ դարձել նյութական վնասների: Այս կապակցությամբ ուզում եմ Ձեզ ներկայացնել հետևյալը: ԲԳՊ-ի անբաժանելի մաս հանդիսացող ԵՈՒՊԼ N076 լիցենզիան, որը տրված է եղել ՍՀԱ ՍՊԸ-ը մինչև 2017թ. ապրիլի 5-ը ժամկետը, վերաբերվում է մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու գործունեությանը և որևէ առնչություն չունի և չէր էլ կարող ունենալ կոնկրետ հանքավայրերի ուսումնասիրության խնդիրների հետ: Այլ կերպ ասած վերը նշված լիցենզիան նման տիպի գործունեություն կատարելու թույլտվություն է և ուրիշ ոչինչ: Ինչ վերաբերվում է կոնկրետ հանքավայրում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու խնդրին, ապա ԲԳՊ-ի կնքման օրվա դրությամբ գործող օրենսդրության համաձայն դրանք կարգավորվում էին համապատասխան հանքավայրում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման թույլտվությամբ, որը տրվում է ՀՀ Քնապահպանության նախարարության կողմից կոնկրետ ժամկետով: Եվ ԲԳՊ-ին կից մենք Ձեզ ենք փոխանցել Մարջանի հանքավայրում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման վերաբերյալ ՍՀԱ ՍՊԸ-ին տրամադրված 26.04.02թ. N221 թույլտվությունը, որի գործողության ժամկետը նախատեսվում էր II եռ. 2002թ-IV եռ. 2007թ.: Ինչպես նաև Հանքավանի հանքավայրի վերաբերյալ Ֆ-02-13/1 թույլտվությունը, որի գործողության ժամկետն էր III եռ. 2002թ – IV եռ. 2003թ: Ի դեպ այս հանգամանքը արձանագրված է նաև «բացահայտման նամակի» 3.6 կետում:

Ահա ըստ էության այն պայմանավորվածությունները որոնք ՍՊԸ-ը համաձայն պայմանագրի փոխանցել է Ձեզ և որոնք Ձեր կողմից պայմանագիրը կնքելու պահին գնահատվել են իրավական առումով լիարժեք և բավարար սեփական պատասխանատվությամբ նշված հանքավայրերում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար: Թե հետագայում ինչպիսի հարաբերություններ են ձևավորվել Ձեր և պետական կառավարման լիազոր մարմնի միջև բաժնետերերը դրա հետ որևէ առնչություն չունեն:

Ի դեպ ՍՊԸ –ն բաժնետերերից մեկը՝ պարոն Յու. Լալազարյանը մեր կողմից նշանակվել էր ՍՊԸ գործադիր տնօրեն և այսօր էլ աշխատում է այդ պաշտոնում, միանգամայն իրավասու է ԲԳՊ–ի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների մեկնաբանությունների հարցում:

Եվ վերջապես, ինչ վերաբերվում է Ձեր նամակում նշված պարոն Վ. Այվազյանին վերագրված դերակատարմանը այս գործարքի նախապատրաստման և

կնքման ընթացքում ես որպես բաժնետեր առաջին անգամ եմ ձեզանից տեղեկանում այդ մասին և տեղեկացնում եմ, որ իմ գործողությունները այս խնդրում որևէ մեկի կողմից չեն ուղղորդվել:

Հուսով եմ, իմ այս մեկնաբանությունները պարզություն կմտցնեն մեր փոխհարաբերություններում:

Հարգանքներով Ձեր

Էդ. Ջանիբեկյան

Trial Version
www.nuance.com

որում մասնավորապես, ասված է. «Ստացա ինձ հասցեագրված Ձեր նամակը, որ թվագրված է 2 նոյեմբերի 2006թ. եւ որում դուք փորձում եք ինձ, որպես ՍՀԱ ՍՊԸ բաժնետեր, ներկայացնել պահանջ այն մասին, որ իբր բաժնետերերի գնման պայանագրով նախատեսված պարտավորությունների մի մասը խախտվել է եւ պատճառ դարձել

նյութական վնասի: ... Թե հետագայում ինչպիսի հարաբերություններ են ձեւավորվել Ձեր եւ պետական կառավարման լիազոր մարմնի միջեւ, բաժնետերերը դրա հետ որեւէ առնչություն չունեն: ... բաժնետերերից մեկը՝ պարոն Յու. Լալազարյանը մեր կողմից նշանակվել է ՍՊԸ գործադիր տնօրեն եւ այսօր էլ աշխատում է այդ պաշտոնում: ... ինչ վերաբերում է Ձեր նամակում նշված՝ պարոն Վ. Այվազյանին վերագրված դերակատարմանը այս գործարքի նախապատրաստման եւ կնքման ընթացքում, ես որպես բաժնետեր՝ առաջին անգամ եմ ձեզանից տեղեկանում այդ մասին եւ տեղեկացնում եմ, որ իմ գործողությունները այս խնդրում որեւէ մեկի կողմից չեն ուղղորդվել: Հուսով եմ, իմ այս մեկնաբանությունները պարզություն կմտցնեն մեր փոխհարաբերություններում»:

6. Պնդում եմ նաեւ, որ ԳԳՄ-ն լիցենզիայով նախատեսված ներդրումային պարտավորությունները չի կատարել եւ ես, որպես նախարար, չէի կարող թույլատրել, որ նոր լիցենզիա տրամադրվի՝ Հանքավանի հանքավայրում աշխատանքներ չիարկանացնելու պատճառով: Պնդում եմ, որ Բնապահպանական նախարարությունը Հանքավանի հանքավայրում իրականացվել է ստուգում, որի արդյունքում կազմվել է ակտ, համաձայն որի պարզվել է, որ Ընկերությունը Հանքավանի հանքավայրում աշխատանքներ չի իրականացրել: Որպես ապացույց, ներկայացնում եմ ՍՀԱ ՍՊԸ գործադիր տնօրեն Յու. Լալազարյանին Բնապահպանության նախարարության աշխատակազմի Օգտակար հանածոների պաշարների գործակալության պետ Խ. Սապոնջյանի ուղարկած փաստաթուղթը,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ ՕՀՊԳ)

ԱԳԵՆՏՍՏՎՈ ՊՈ ԶԱՊԱՍԱՄ
ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ
АППАРАТА МИНИСТЕРСТВА
ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ

(АЗШН РА

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ
НАЧАЛЬНИК АГЕНТСТВА

375009» Երևան, Կորյունի փող., 14
հեռ. 565196

375009, Ереван, ул. Корюна, 14
тел. 565196

20/4
17.03.06

«ՍՀԱ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն. Յ.Լազարյանին

Հարգելի պարոն Լազարյան

Վերադարձնում եմ Ձեր 26.12.2005 թ. N 17-1 գրությամբ ՀՀ ՕՀՊԳ-ի դիտարկմանը ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Հանքավանի մոլիբդենի հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորման նյութերը, դրանց պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացի կասեցման պատճառով:

Պաշարների հաշվարկման նպատակով կոնդիցիաների պարամետրերի հիմնավորման առաջին անհրաժեշտ պայմանն է դրա հիմքում ընդունվող երկրաբանական տեղեկատվության լիարժեքությունն ու հավաստիության ընդունելի աստիճանը, ինչը տվյալ աշխատանքում ապահովված չէ:

Ձեր նյութերում առավելապես օգտագործված են նշված հանքավայրում տասնյակ տարիների 50-ական թվականներին կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքները, որոնց արժանահավատության գնահատականը տրված էր նախկին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի 02.12.1959 թ. N 2880 և 01.09.1962 թ. N 3749 արձանագրություններով: Թեև վերջին արձանագրության որոշման բաժնի 3-րդ կետով հանքավայրի պաշարները հաստատվել և դասվել էին արտահաշվեկշռայինների շարքին, այնուամենայնիվ, այդ

ա) ճշգրտել և սահմանված կարգով վերահաստատման ներկայացնել հանքավայրի կոնդիցիաների պարամետրերը,

բ) վերամշակել ամփոփ երկրաբանական փաստագրման նյութերը, վերացնելով դրանցում բացահայտված սխալներն ու անճշտությունները,

գ) վերլուծել առկա հիդրոերկրաբանական տեղեկատվությունը, տալով բովանդակային հորիզոններից ներքև գտնվող պաշարների ջրակալման գնահատականը,

դ) կատարել սկառնային պղինձ-մոլիբդենային հանքաքարի տեխնոլոգիական հետազոտություններ, դրանց օգտագործման հնարավորությունը պարզելու նպատակով:

Ներկայումս Ձեր կողմից փորձ է արված անմիջականորեն վերահիմնավորելու կոնդիցիաների պարամետրերը, ինչն անհնարին է առանց վերոնշյալ աշխատանքների կատարման: Ընդ որում, Ձեր նյութերի և նախկինում կուտակված երկրաբանական տեղեկատվության ՀՀ ՕՀՊԳ-ի մասնագետների ու փորձագետ՝ Գ.Շեխյանի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվեց, որ հանքավայրում լրացուցիչ կատարվելիք աշխատանքները չեն սպառվում հիշյալ արձանագրության որոշման բաժնում նշվածներով և, որ անհրաժեշտ է նաև առնվազն.

- գնահատել նախկինում կատարված նմուշարկման աշխատանքների արդյունքների ներկայացուցչությունը հանքաքարի որակը բնութագրելու առումով, քանի որ հորատանցքերից չի ապահովվել հանուկի ելքի ընդունելի մակարդակը, իսկ ակոսային և քվածքային (զաղիրկովոե) նմուշարկման տվյալների միջև փաստվել է էական շեղում (շուրջ 1.5 անգամ),

- հստակ ֆիքսել հանքաքարի օքսիդացման գոտու սահմանները և, ուսումնասիրելով օքսիդացված հանքաքարի տեխնոլոգիական հատկությունները, տալ դրա օգտագործման հնարավորության գնահատականը, քանի որ դրանով պայմանավորված է ինչպես օգտակար հանածոյի պաշարները, այնպես էլ մակաբացման սպարների ծավալները, իսկ վերջիններս մակաբացման գործակցի միջոցով անմիջականորեն ազդում են ապագա ձեռնարկության ծախսային ցուցանիշների, ուստի և կոնդիցիաների պարամետրերի վրա:

Այսպիսով, ՀՀ ՕՀՊԳ-ն գտնում է, որ առկա երկրաբանական տեղեկատվության (Ձեր կողմից լրացուցիչ անցած 5 հորատանցքերի տվյալները ներառյալ) արժանահավատությունը ամենևին բավարար չէ հանքավայրի երկրաբանատնտեսագիտական օբյեկտիվ գնահատականը տալու և հանքավայրի կոնդիցիաների պարամետրերը հիմնավորելու համար:

Հ. Սարգսյան

որում մասնավորապես ասված է. «Վերադարձնում եմ Ձեզ 26. 12. 2005 թ. ... գրությամբ ՀՀ ՕՀՊԳ-Ի դիտարկմանը ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Հանքավանի պղինձ-մոլբդենի հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորման նյութերը, դրանց ընդերքաբանական փորձաքննության գործընթացը կասեցնելու պատճառով:

Պաշարները հաշվարկելու նպատակով կոնդիցիաների պարամետրերը հաշվարկելու առաջին անհրաժեշտ պայմանը է դրա հիմքում ընդունվող երկրաբանական տեղեկատվության լիարժեքությունն ու հավաստիության ընդունելի աստիճանը, ինչը տվյալ աշխատանքում ապահովված չէ: Ձեր նյութերում առավելապես օգտագործված են նշված հանքավայրում նախորդ դարի 50-ական թվականներին կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքները, որոնց արժանահավատության գնահատականը տրված է ...1959 եւ 1962 թվականների արձանագրություններով, ... որոնցում հանքավայրի պաշարները դասվել են արտահաշվեկշռայինի շարքին եւ նախատեսվել է, որ հանքավայրի շահագործման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում անհրաժեշտ է նախապես կատարել մի շարք լրացուցիչ աշխատանքներ: ... Ձեր կողմից փորձ է արված՝ անմիջականորեն վերահիմնավորել կոնդիցիաների պարամետրերը, ինչն անհնարին է՝ առանց վերընշված աշխատանքները կատարելու: ... Այսպիսով, ՀՀ ՕՀՊԳ-ն գտնում է, որ առկա երկրաբանական տեղեկատվության արժանահավատությունը ամենեւին բավարար չէ՝ հանքավայրի երկրաբանատնտեսագիտական օբյեկտիվ գնահատական ստանալու եւ հանքավայրի կոնդիցիաների պարամետրերը հիմնավորելու համար»:

7. Պնդում եմ նաեւ, որ ով էլ լիներ նախարար, չէր կարող թույլատրել, որ ԳԳՄ-ն 2005թ-ից շարունակի իր աշխատանքը: Պնդում եմ նաեւ, որ ԳԳՄ-ն աշխատանքներ չի իրականացրել նաեւ Մարջանի հանքավայրում: Կա իմ պնդումը ապացուցող համապատասխան ակտ եւ բազմաթիվ այլ
փաստաթղթեր:

Հաստատված է ՀՀ բնապահպանության նախարարի
«02 »« մայիսի 2002թ. թիվ 59 հրամանով

Ձև 1

ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանական պետական տեսչություն

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ ----------

բնապահպանական պետական տեսուչի կողմից
ստուգում անցկացնելու մասին

Հանձնարարվում է՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ԲՊՏ-ի ԸԵՄՎ բաժնի պետ Երվանդ Հովհաննիսյանին, ավագ պետական տեսուչ-երկրաբան Գագիկ Խոջայանին, պետական տեսուչ-երկրաբան Վահե Մալխասյանին, պետական տեսուչ-մարկշեյդեր Թամարա Դիլանյանին և ՀՀ բնապահպանության նախարարության իրավաբանական բաժնի պետ Արթուր Համբարձումյանին

(ստուգողի պաշտոնը, անուն նր. ազգանունը)

կատարել երկրաբանական վերահսկողություն համաձայն «ՀՀ–ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, ընդերքօգտագործման կարգի և բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ

(ստուգման նպատակը, հիմք (եր)ը)

«ՍՀԱ»ՍՊԸ-ում, ՀՀ Սյունիքի մարզի Մարջանի ոսկի-բազմամետաղային երակում

(կազմակերպության անվանումը, հասցեն, հաշվառման համարը (ՀՎՀՀ))

(ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը)

Ստուգման իրավական հիմք(եր)ը՝ «ՀՀ–ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի հրամանի

(Հայաստանի Հանրապետության բնապահպանական տեսչության պետի հրամանի համարը, ամիս, ամսաթիվը)

Ստուգումը սկսել «25» 04 2006թ. և ավարտել «10» 05 2006թ.

Հանձնարարագրի մասին ծանուցվել է կազմակերպությանը

«04» ---------- 2006 թ.

(կազմակերպության ղեկավարի ստորագրությունը)

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանական պետական տեսչություն

ՍՏՈՒԳՄԱՆ ԱԿՏ N 010067

10..05.2006թ. գ.Երևան

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով և համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 010094 հանձնարարագրի ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ԲՊՏ ԸԵՄՎ բաժնի պետ Երվանդ Հովհաննիսյանի, ավագ պետական տեսուչ- երկրաբան Գագիկ Խոջայանի և պետական տեսուչ- երկրաբան Վահե Մալխասյանի կողմից 25.04.2006թ.-10.05.2006թ. «ՍՀԱ» ՍՊԸ-ում անցկացված ստուգման արդյունքում պարզվեց, որ.

1. «ՍՀԱ» ՍՊԸ կողմից Մարջանի երևակումում երկրաբանական ուսումնասիրությունները պետք է կատարվեին համաձայն ՀՀ բնապահպանության նախարարությունում հանավանության արժանացած և երկրաբանական ֆոնդում գրանցում ստացած Ֆ-02-12/1 նախագծի, որի գործունեության ժամկետն է 2002 թվականի 2-րդ եռամսյակից մինչև 2007 թվականի 4-րդ եռամսյակը: Նշված նախագծով ենթակա են կատարման հետևյալ ծավալների աշխատանքները՝

1. առուներ-2240մետր խորհանարդ
2. խրամներ – 6650 մետր խորհանարդ
3. բովանցքներ- 3910 մետր
4. վերընթաց – 80 մետր
5. բովանցքի վերականգնում – 210 մետր
6.տեխնոլոգիական նմուշ – 30.000 տոննա:

27.04.2006թ. դրությամբ հանքերևակումում նախատեսված աշխատանքներից ոչինչ չի կատարված, սակայն, խախտելով «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի)» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները՝ այն է. «1.Ուսումնասիրության հատուկ լիցենզառուն պարտավոր է սկսել ուսումնասիրության աշխատանքները լիցենզիայի տրամադրման մասին որոշման կայացման օրվանից վեց ամսվա ընթացքում, եթե լիցենզիայով այլ ժամկետ նախատեսված չէ, 2. աշխատանքներն իրականացնել համաձայն հաստատված նախագծի», 2002 թվականից մինչև 2006թ. ապրիլի 27-ը ընկած ժամանակահատվածում վերը նշված աշխատանքներից ոչինչ կատարված չէ, որը հաստատվել է նաև «ՍՀԱ» ՍՊԸ-ի երկրաբանի 05.05.06 թվականի բացատրությամբ: Բացատրությունից պարզվել է, որ Մարջանի ոսկի-բազմամետաղային երևակումում բացի 2005թվականի Ավստրալիական Iberian Resources ընկերության այցի ժամանակ վերցված մի քանի նմուշներից, որոնց անալիզի արդյունքները գտնվում են Ավստրալիայում, այլ աշխատանքներ հանքավայրում կատարված չեն:

Արձանագրված վերը նշված խախտումների կատարման ժամանակահատվածը ներառում է 2003 թվականի մայիսի 10-ից 2006 մայիսի 10-ը:

2. Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ «ՍՀԱ» ՍՊԸ-ն մինչ օրս չի կնքել լիցենզային պայմանագիր:

ստորագրություններ

Ե. Հովհաննիսյան
Գ. Խոջայան
Վ. Մալխասյան
Յու. Լալազարյան

Госгеокатроль 007РА

Объяснительная записка

На Мардинском золото-полиметаллическом месторождении в 2007г. были проведены камеральные работы по изучению фоновых материалов и составлению проектной документации для детальной разведки.

Практически в 2003-2004гг. полевые работы не были проведены. В 2005 году по рудному телу №7, наименее изученному в период предварительной разведки, объем Австралийской Швейцарской Недвижи ООО совместно с ООО „АФА" взяли бороздовые пробы для определения золота и проведение экспрессного геохимического опробования характера. Основная цель этих работ - уточнение морфологии рудных тел и наличие в них золото-серебряного оруденения. Пробы были отправлены в Австралию для контрольного анализа. Результаты на місці не имеются. Предусмотренные проектом работы не проведены до получения ~~г. Перми~~ положительного отзыва от Австралийской стороны г. Перми.

5.01.06г.

П. Мерзлый

Հիշատակագրություն

26-27 մարտի 2006թ.

Աստղա ԵՁ

Հ/ Հիսարյան

Բնապահպանության Եռակողմանի հանձնաժողով

Արմեն Հովհաննիսյան - ՀՊՏ-ի գլխավոր քարտուղար

Գարիկ Խոջոյան - Տարածքային կառավարման պետական տեսչության տնօրեն

Գագիկ Մարտիրոսյան - ՀՊՏ-ի գլխավոր մասնագետ բնության պահպանության գծով

«Հորիզոն Գրուպ» ՍՊԸ-ից

Նորայր Հովհաննիսյան - «ՍՏԱ» ՍՊԸ-ի գլխավոր

Հրանտ Խաչատրյան - «Հորիզոն Գրուպ» ՍՊԸ ձայնաստրատներ Հայկ Հարությունյան

Հեղինե Սիրունյան

Հրանտ Հրաշեկյան - գլխավոր տեխնոլոգ գլխավոր

Գեներալ

«ՍՏԱ» ՍՊԸ-ի կողմից հեղուկացիոն ավազանի վերականգնման աշխատանքների կատարման մասին 2002-07թթ. Բնապահպանության Եռակողմանի հանձնաժողովի անդամներին ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը:

Анықтама

2002-06жж І топдағы студенттер арасында
ата-ана жиналысында кәмелетке толмаған
балалардың денсаулығын нашақорлықтан
сақтау мәселесінің талқыланғаны туралы
хаттама болғандығы анықталды.

Ата-ана комитеті мүшелері

Т. Сейтжанова

Ф. Ғалымова

А. Өтемұратова

Ж. Ғазизова

Н. Рысқұлова

Н. Ержанова Е.

27.04.2006ж.

Ակտ

«ՍՀԱ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՋԱՆԻ ՈՍԿԻ ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ԵՐԵՎԱԿՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԴՐՄԱՆ

02.05.2006թ.

Ք. ԵՐԵՎԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ԲՊՏ ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի պետ Ե. Հովհաննիսյանը, բաժնի ավագ պետական տեսուչ-երկրաբան Գ. Խոջայանը, պետական տեսուչ-երկրաբան Վ. Մալխասյանը, «ՍՀԱ» ՍՊԸ-ի տնօրեն Յու Լալազարյանի մասնակցությամբ կազմեցինք սույն ակտը առ այն, որ «ՍՀԱ» ՍՊԸ-ն ՀՀ Սյունիքի մարզի Մարջանի ոսկի-բազմամետաղային երևակման հետախուզությունը կատարում է համաձայն ուսումնասիրության հատուկ լիցենզիա N 1-ի տրված 08.07.2004թ.:

«ՍՀԱ» ՍՊԸ-ն մինչ օրս չի կնքել լիցենզային պայմանագիր:

«ՍՀԱ» ՍՊԸ-ն մարջանի հանքերևակումում հետախուզական աշխատանքներ կատարում է համաձայն գիտխորհրդում հավանության արժանացած և երկրաբանական Ֆոնդում գրանցում ստացած Ֆ-02-12/1 նախագծի, որի գործունեության ժամկետն է 2002թ. 4-րդ եռ. մինչև 2007թ. 4-րդ եռ.:

Ըստ այդ նախագծի երևակումում նախատեսվում է կատարել հետևյալ ծավալները՝

առուներ-2240մ^3

խրամներ-6650մ$_3$

բովանցքներ-3910մ

վերընթաց-80մ

բովանցքի վերականգնում-210մ

տեխնոլոգիական նմուշ-30000տ

27.04.2006թ.դրությամբ հանքերևակումում նախատեսված աշխատանքներից ոչինչ չի կատարված, ինչը արձանագրվել է 26-ին 27-ը ապրիլի 2006թ. Միսիան քաղաքում կազմված արձանագրությամբ:

Տեղանքը ականապատված չէ և որևէ խոչնդոտ չկա տեղանք այցելելու համար:

Ստորագրություններ

Ե. Հովհաննիսյան

Գ. Խոջայան

Վ. Մալխասյան

Յու. Լալազարյան

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Տ. Քանարյանին
Վ. Խաչատրյանին
Ք. Կարապետի

Ա.Ավագյան

15 05
«-------» --------- 2007թ.

ՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՊԵՏ

« »_____ 2007թ.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ԱՅՎԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Այվազյան

Ի պատասխան Ձեր 02.05.07թ N 1-11/648 գրության, կից Ձեզ եմ ուղարկում գրությունում նշված կազմակերպությունների կողմից 2006թ և 2007թի առաջին եռամսյակի ընթացքում վճարված հարկերի և պարտադիր վճարների գումարների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

Միաժամանակ հայտնում եմ, որ

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 08.01.07թ. N 5375-06 գրության համաձայն «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում, որի արդյունքում 15.02.07թ N 1024191 ստուգման ակտով արձանագրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա 4655.4 հազ. դրամ: 28.02.07թ. N 1046/6-4 գրությունով վերը նշված ստուգման արդյունքները ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Կազմակերպության կողմից նշված ստուգման ակտը վերադասության կարգով բողոքարկվել է, սակայն ՀՀ ԿԱ ՀՊԾ գանգատարկման հանձնաժողովի 27.04.07թ. N 106/5 որոշմամբ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ,

2. ՀՀ ԿԱ ՀՊԾ Հանքարտադրողների ոլորտային ՀՏի կողմից 14.03.07թ. ներկայացվել է «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ից 14077.3 հազ. դրամ հայցագնով բռնագանձման հայց: Կազմակերպությունն իր հերթին 23.03.07թ. դիմում է ներկայացրել դատարան տեսչության 31.10.06թ. N 1018769 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով, որով վճարման էր առաջադրվել 13935.7 հազ. դրամ շահութահարկի գումար: Երկու քաղաքացիական գործերը միավորվել են մեկ վարույթում և գործի քննությունը նշանակվել է 17.05.07թին, դատավոր՝ Ն. Տավարացյան:

Առդիր մեկ թերթ:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

<< բնապահպանության նախարարության աշխատակազմ»
Ընդհանուր բաժին
Մուտք № 4-2164
«14» 05 2007

կատ. Ա. Սառիկյան
☎ 53-80-47

375015 ք.Երևան, Մ. Խորենացու 7
7 M. Khorenatsu str., Yerevan, 375015
375015, г.Ереван, ул.М.Хоренаци 7

1-529
15.05.07թ.

☎ (8852) 53-82-00

Անվանում		Եկամուտ		Հարկերի		Բնապահպանական		Սոցիալ.		Դեպակաց տուրք		Ընդամենը (հազ.դր)	
		2006	2007 1-ին եռ.	6	2007 1-ին եռ.	2006	2007 1-ին եռ.	2006	2007 1-ին եռ.	2006	2007 1-ին եռ.	2006	2007 1-ին եռ.
[illegible]	02560994	1,581	1,078.2	29.0		73.3	8,713.0	1,040.7	676.6	10,350.0		12,972.6	1,754.7
[illegible]	04213127	10,262.[illegible]	3,800.0	[illegible]2.0				12,063.0	4,460.0	10,110.0		32,537.9	16,973.0
[illegible]	01004387	1,094.5	302.5					870.0	200.6		100.0	2,216.5	603.1
[illegible]	02546129							101.7	22.7			101.7	22.7
[illegible]	00047027												

2006 թվականի ապրիլին ես հանձնարարել եմ ընդերքօգտագործման կարգի եւ բնապահպանական օրենսդրության պահանջների

կատարման երկրաբանական վերահսկողություն կատարել ՍՀԱ ՍՊՀ-ում եւ Սյունիքի մարզի Մարջանի ոսկու-բազմամետաղային երեւակումում: Հանձնարարագրի մասին ծանուցվել է ԳԳՄ գլխավոր տնօրեն Յու. Լալազարյանը:

Ըստ ստուգման ակտի. «27.04. 2006 թ. դրությամբ հանքերեւակումում նախատեսված աշխատանքներից ոչինչ չի կատարված: ... Բացատրությունից պարզվել է, որ Մարջանի ոսկի-բազմամետաղային երեւակումում բացի 2005 թվականին ... վերցրած մի քանի նմուշներից, այլ աշխատանքներ հանքավայրում կատարված չեն: ... Ուսումնասիրությամբ պարզվել է նաեւ, որ ՍՀԱ ՍՊԸ-ն մինչ օրս չի կնքել լիցենզային պայմանագիր»:

Եթե նրանք որեւէ լիցենզիա ունեն, ապա թող ներկայացնեն: Նշված փաստերն արձանագրված են նաեւ 02. 05. 2006 թ. ՍՀԱ ՍՊԸ-ի կողմից հետախուզվող ՀՀ Սյունիքի մարզի Մարջանի ոսկի-բազմատեղային երեւակման առաջնային նյութերի եւ իրականի հետ համադրման ակտում: Ակտը նաեւ արձանագրել է, որ.«Տեղանքը ականապատված չէ եւ որեւէ խոչընդոտ չկա տեղանք այցելելու համար»:

Որ նախատեսված պայմանագրային պարտավորությունները ԳԳՄ-ն չի կատարել, վկայում է նաեւ նաեւ Բնապահպանության նախարարի հարցմանն ի պատասխան ՀՀ Հարկային պետական ծառայության պետ Ֆելիքս Ցոլակյանի 15. 05. 2007 թ. պատասխան նամակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

375010, Երևան, Մ.Մկրտչյան 5
հեռ. 56-40-17

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԱՏՈՒԿ

ԼԻՑԵՆԶԻԱ ՀԱ-Լ-14/526

Տրման ամսաթիվ 22.04.2008թ

Գործողության ժամկետը (մինչև 25 տարի) 22.04.2008թ-ից մինչև 22.04.2033թ

Հանքային իրավունք կրողի անվանումը և գտնվելու վայրը «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ
(անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը և բնակության վայրը)
ք. Երևան Զարոբյան 1/1

Հանքային իրավունք կրողի պետական գրանցման վկայականի համար 03Ա 053303

Արդյունահանվող օգտակար հանածոն(ները) ոսկի - բազմամետաղ

Սյունիքի մարզի Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի, կենտրոնական տեղամասի և թևերի

Հանքավայրի հաստատված պաշարների մասին տեղեկություններ

Շահագործման է տրամադրվում ըստ C1 կարգի՝593.2 հազ տ և C2 կարգի 4114.6 հազ տ հանքաքար

Հատուկ պայմաններ (նիմք ընդունելով հանքարդյունահանման ծրագրի դրույթները)

Տարեկան արտադրողականությունը 200.0 հազ տ: Հանքաքար Տեղամասի մակերեսը՝ 1960.6 հա

C1 կարգի- Au-1776.2կգ, Ag-50.1տ,Cu-0.64 հազ տ, Zn-5.2հազ տ, Pb-7.7 հազ տ

C2 կարգի- Au- 10221,4կգ, Ag- 385.1 տ,Cu-5.6 հազ տ, Zn- 41.5հազ տ, Pb-49.2 հազ տ

Լիցենզիայով տրամադրված ընդերքի տեղամասի նկարագրությունը և հատակագիծը բերված է սույն լիցենզիայի հավելվածում:
Լիցենզիան ուժի մեջ է մտնում համապատասխան լիցենզային պայմանագրի կնքման պահից և գործում է լիցենզիայի պայմանների գործողության ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
առևտրի և էներգետիկայի նախարարության
նախարար ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ

Կ. Տ

10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈԲԱԼ ԳՈԼԴ ՀԱՆՔԱՎԱՆ ՍՊԸ

REPUBLIC OF ARMENIA
GLOBAL GOLD HANKAVAN, LLC

Հայաստանի Հանրապետություն,
Երևան, Զարոբյան 1/1

1/1 Zarobyan Street, Yerevan,
Republic of Armenia

Պատ. Հարգելի՝
Բնապահպանության Նախարար
Հայաստանի Հանրապետություն
Երևան, Հայաստանի Հանրապետության

28 դեկտեմբերի, 2007թ

Հարգելի Նախարար Հարությունյան

Կից ներկայացվում է Գլոբալ Գոլդ Հանքավան ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Մարջանի բազմամետաղային հանքավայրում 2007թ-ին կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ պաշարների հաշվարկման համար կոնդիցիաների տեխնիկատնտեսագիտական հիմնավորմամբ Հաշվետվությունը:

Սույն Հաշվետվությունը (տեղեկությունը) տրամադրվում է Հայաստանի Հանրապետության Ընդերքի Մասին Օրենսգրքի 26դ հոդվածի և Ընդերքն Օգտակար Հանածոների Շահագործման Նպատակով Ուսումնասիրության և Արդյունահանման Համար Տրամադրելու (Կոնցեսիայի) Մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 9դ հոդվածի դրույթներով սահմանված կարգով: Սույն տեղեկությունը տրամադրելու ամսաթվից հինգ (5) տարվա ընթացքում սույնին կից ներկայացված կամ նշված տեղեկությունը և տարեում նշված տվյալները չեն կարող տրամադրվել կամ բացահայտվել, այլ նպատակներից բացի վերլուծելիս որևէ նպատակով կամ, եթե դրանց կողմից, կամ նրանցից կամ նրանց միջոցով

Աշոտ Պողոսյան
Տնօրեն, Գլոբալ Գոլդ Հանքավան ՍՊԸ

5-12
07 01 08

1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ
ՊԱՇԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ ՕՀՊԳ)

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ПО ЗАПАСАМ
ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ
АППАРАТА МИНИСТЕРСТВА
ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ

(АЗПИ РА)

375009, Երևան, Կորյունի փող., 14
հեռ. 565196

375009, Ереван, ул. Корюна, 14
тел. 565196

№ 020/11
«05» 05 2008 թ

«Մնգո Գոլդ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն. Ա. Պողոսյանին

Հարգելի պարոն Պողոսյան

Ձեր 28.04.2008 թ. գրությամբ (մտից 29.04.2008 թ. № 5-593) ՀՀ բնապահպանության նախարարությունն պետական ընդերքաբանական փորձաքննության ներկայացված Մարջանի բազմամետաղային հանքավայրի պաշարների վերագնահատման հաշվետվությունում բացակայում է օբյեկտում կատարված լանահետախուզական աշխատանքների առաջնային երկրաբանական փաստագրման նյութերի արժանահավատության հավաստումը պետական երկրաբանական վերահսկողության ծառայության կողմից:

Նշված նյութերի փորձաքննությունը բնականոն ընթացք տալու համար անհրաժեշտ է հնարավորինս շուտ ժամկետներում ապահովել համապատասխան փաստաթղթերի ներկայացումը ՀՀ ՕՀՊԳ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ձեր 2007 թ. դեկտեմբերի 28-ի գրությամբ ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացված Մարջանի բազմամետաղային հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի հիմնավորման նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացը ձգձգվում է, քանի որ նյութերի հեղինակները մինչ օրս չեն ապահովել դրանցում բացահայտված թերությունների ու թացթողումների վերացումը:

Ակնկալում ենք Ձեր անհրաժեշտ միջամտությունը այս հարցում:

Խ. Սապոնջյան

№ 020-Ե/95
26.12.2008թ.

«Կլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ի տնօրեն
պրն. Ս.Պողոսյանին

Հարգելի պրոֆ Պողոսյան

ՀՀ Օգտակար հանածոների պաշարների գործակալության 05.08.2008թ. № 020/11 գրությամբ դուք տեղեկացվել էիք, որ Ձեր 28.12.2007 թ. գրությամբ գործակալություն ներկայացված Մարջանի բազմամետաղային հանքավայրի կոնցեսիաների պարամետրերի հիմնավորման նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացը ձգձգվում է դրանցում բացահայտված թերություններն ու բացթողումները նյութերի հեղինակների կողմից չվերացնելու պատճառով:

Հաշվի առնելով, որ մինչ օրս նյութերի լրամշակման հարցում իրավիճակը մնացել է անփոփոխ, դրանց փորձաքննությունը կասեցվում է:

Հաղորդագրությունը նշտող եք հետ ստանալ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների փորձաքննության:

Խ.Սարգսյան

Էլեկտրոնային տարբերակը ՀՀ 29.12.2008թ.-ին

Յուրաքանչյուր [illegible]

Վերը ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության ԳԳՄ-ին 25 տարով՝ 2008 թվականի ապրիլի 22-ից մինչեւ 2033 թվականը տրված հանքարդյունահանման հատուկ լիցենզիան, որով ԳԳՄ-ն ստացել է Սյունիքի մարզի Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը արդյունահանելու իրավունք՝ շահագործման լիցենզիա, տրվել է առանց

հանքավայրի հաստատված պաշարների մասին տեղեկատվությունն ունենալու: Մինչդեռ սա օրենքի կոպիտ խախտում է, քանի որ առանց հանքավայրի հաստատված պաշարների մասին ամփափ տեղեկատվություն ունենալու ոչ ոք շահագործման լիցենզիա տալու իրավունք չունի:

2002 թվականի նոյեմբերին ընդունված «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության եւ արդյունահանման համար տրամադրելու /կոնցեսիայի/ մասին» օրենքի երկրորդ բաժնի հանքային իրավունքները սահմանող 10-րդ հոդվածի 6-րդ կետը միանշանակ սահմանում է, որ. «Լիցենզառուի եւ լիազոր մարմնի միջեւ կնքվում է լիցենզիայի պայմանագիր: Լիցենզիայի գործողության ժամկետի սկիզբ է համարվում լիցենզիային պայմանագիր կնքելու պահը: Լիցենզիայի տրման եւ լիցենզիային պայմանագրի կնքման միջեւ ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել՝ 1) ուսումնասիրության հատուկ լիցենզիայի համար՝ 5 ամիսը. 2) ուսումնասիրության լիցենզիայի համար՝ 2 ամիսը»: Իսկ նույն օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ. <Հանքարդյունահանման լիցենզիա ստանալու դիմումին կից ներկայացվում է /ի շարս այլ փաստաթղթերի/ ամփոփ տեղեկատվություն հանքավայրի հաստատված պաշարների վերաբերյալ»:

Իսկ 2002 թվականի նոյեմբերին ընդունված «Ընդերքի մասին» օրենքի ընդերքօգտագործման կարգը սահմանող 11-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ. <Երկրաբանահետախուզական աշխատանքները եւ հանքավայրերի շահագործումը կատարվում են լիազորված մարմնի եւ ընդերքօգտագործողի միջեւ կնքված պայմանագրի համաձայն>: Նույն օրենքի /Ընդերքի մասին երկրաբանական եւ այլ տեղեկատվության պետական փորձաքննությունը/ 28-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերը սահմանում են. «Ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարփակված պաշարների պետական փորձաքննությունից, ինչպես նաեւ հետախուզված եւ նախնական գնահատված պաշարների քանակը եւ որակը լիազորված մարմնի սահմանած կարգով հաստատելուց հետո: Օգտակար հանածոների պաշարների վերաբերյալ պետական փորձաքննության եզրակացությունը հիմք է ծառայում դրանք պետական հաշվեկշռում գրանցելու համար»:

Իսկ սա նշանակում է, որ ԳԳՄ-ն զբաղված է Հայաստանի ընդերքը կեղեքելով եւ իր նպատակին հասել է անօրինական ճանապարհով, շանտաժի միջոցով: Հիմա էլ հրապարակավ ԳԳՄ-ն հպարտանում է, որ

առանց պետությանը հայտնելու, թե իր շահագործած հանքում ինչ պաշարներ կան՝ կարողացել է շահագործման լիցենզիա ստանալ:

ԳԳՄ-ն ակնհայտորեն այս լիցենզիան վերավաճառելու նպատակ է հետապնդում եւ ցանկանում է հանքի ուռճացված պաշարներ ցույց տալ՝ հնարավոր վաճառքից առավել շահույթ ստանալու նպատակով: ԳԳՄ-ն գործում է անօրինական դաշտում, շանտաժի միջոցով եւ հենց այս պատճառով է իր բաժնետերերի հետ կնքած պայմանագրում ամրագրել, որ բոլոր ծագած վեճերը պետք է լուծվեն Նյու Յորքի հարավային շրջանի դատարանում, ոչ թե Հայաստանի որեւէ դատարանում:

Ես հիմնավոր ենթադրություն եմ կատարում, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքով ԱՄՆ-ն տնտեսական ծանր իրավիճակում հայտնվելուց հետո երկրից խոշոր գումարներ արտահանած բոլոր ընկերություններից, նաեւ ԳԳՄ–ից հաշվետվություն է պահանջում, թե ինչպես է օգտագործել այդ փողերը: ԳԳՄ-ի բաժնետերերը եւս պահանջում են բացատրել, թե ինչու է իրենց միջոցները ներդրվել մեծ ռիսկային բիզնեսում: Հիմա ԳԳՄ-ն շինծու դատավարություններ ձեռնարկելով՝ արդարանալու փորձ է անում, քանի որ այդ բաժնետերերի միջոցները վատնել է: Ակներեւ է նաեւ, որ ԳԳՄ-ն լուրջ խնդիրներ ունի նաեւ ՀՀ կառավարության հետ եւ բոլոր վեճերը փորձում է հանգուցալուծել հաշտության պայմանավորվածությամբ, հերթական շանտաժին նախապատրաստվելու նպատակով: Այս կեցվածքը բացահայտում է, որ ԳԳՄ-ն խուսափում է որեւէ հարց վիճարկել կամ քննության թողնել Հայաստանի դատարանում:

Եթե առավել ուշադրությամբ ու հետեւողականությամբ որեւէ մեկն ուսումնասիրի ԳԳՄ գործունեությունը, հավատացած եմ՝ օրինախախտումների, կեղծիքի, խաբեության ու շանտաժի բազմաթիվ նոր փաստեր կարող է ի հայտ բերել: Ինքս այսուհետ չեմ անդրադառնալու ԳԳՄ-ի գործունեությանը եւ նրա հրապարակած կեղծիքներին: Այսպիսով ես եզրափակում եմ ԳԳՄ-ի վերաբերյալ լրատվամիջոցներով իմ բոլոր անդրադարձերը, արձագանքներն ու հրապարակումները: Իսկ եթե խնդիրներ կան, ապա դրանք պատրաստ եմ լուծել միայն իրավական հարթությունում: